Ծուշանիկ Կուրղինյան

Կալանավորներին

Ո՞վ է փողոցի անդորրը խլում
Եվ կոշտ երկաթի արագ հարումից
Օդում միալար ակկորդ արձակում . . .

Կալանավորնե՛ր . . . Որպես ուրվական
Անցնում են ահա: Հյուծված դեմքերից
Թախիծ է կաթում և շրթունքները
Լայն-լայն բաց արած ազատ օդ ծծում . . .

Եվ ծեր է մեկը, ալեզարդ գլխով,
Ծանր շղթայից կորացած, տրտում
Առաջ է գնում ու նրա հանգած
Պղտոր աչքերից արցունք է կաթում:

Մյուսը ջահել կատաղի դեմքով
Կրակ հայացքով շուրջն է դիտում
Ու կալանների սուր զրնգոցի հետ
Կատաղի սրտի վրեժը ժայթքում:

Երրորդը կին է . խունացած շալը
Ձգած ուսերին . բաց լայն ճակատին
Լուռ տանջանքների հետքն է երևում,
Ու զոջման զայրույթ խաղում աչերին .

Եվ փլփլում են մթության միջև
Պահապանների սևացած ջահեր,
Սև կյանքի մեղքեր հլու քաղելու
Սիբիր են քշում թե՛ ծեր, թե՛ ջահել . . .

Ո՞վ է փողոցի անդորրը խլում
Եվ կոշտ երկաթի արագ հարումից
Օդում միալար ակկորդ տարածում—
Կամ զուր տանջվողներ,
Կամ արնոտ ձեռքեր . . .

1905